ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՄԱԱՊՁԲ-9/8-2

ք.Երևան 20.12.2019թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Մ. Ղամբարյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Էսզեթ Ֆարմա» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ե. Սարգսյանի, ով գործում է «Էսզեթ Ֆարմա» ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են **2** օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են **2** օրից ավելի,

2.1.8 Ընդունել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի՝ խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է **37,550,520** (երեսունյոթ միլիոն հինգ հարյուր հիսուն հազար հինգ հարյուր քսան) ՀՀ դրամ, ընդ որում Վաճառողը ավելացված արժեքի հարկ (ԱԱՀ) վճարում է միայն **4**-րդ, **19**-րդ և **20**-րդ չափաբաժինների մասով՝ **79,120** (յոթանասուն ինը հազար մեկ հարյուր քսան) ՀՀ դրամի չափով: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա, 5 բանկային օրվա ընթացքում՝ պայմանագրի

վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են

ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պարանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **5** աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[1] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

---

[1] *Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:*

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու

վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է 12 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Սույն պայմանագրով նախատեսված Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ ՌԲ վարչությունը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Էսզեթ Ֆարմա» ՍՊԸ
ք. Երևան, Բագրևանդի 5	ՀՀ, ք.Երևան, Տիգրան Մեծի 63/23
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011144129	Հ/Հ 1930000521940100
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 00433863
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ	տնօրեն
Մ. ՊԱՄԲՈՒՐՅԱՆ	Ե. ՍԱՐԳՍՅԱՆ

AM 0296576

Հավելված N 1
N ՀՄԱԱՊՁԲ-9/8-2 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Ապրանքի									
Հ/Հ	անվանումը	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	արտադրողի անվանումը	չափման միավորը	ընդհանուր քանակը	միավոր գինը /ՀՀ դրամ/	ընդհանուր գինը /ՀՀ դրամ/	Մատակարարման ժամկետը
1	Տուրբինային գչիրներ	Տուրբինային գչիրներ-Դիադեչ Դայմոնդ	Coltene Whaledent	Coltene Whaledent	հատ	1,000	1,020	1,020,000	Ոչ ուշ, քան 23.12.2019թ.
2	Պլոմբը հարթեցնելու ռետին	Պլոմբը հարթեցնելու ռետին-Պրո Քափ	Kerr	Kerr	հատ	1,200	299	358,800	Ոչ ուշ, քան 23.12.2019թ.
3	Ատամնաբուժական ասեղներ	Ատամնաբուժական ասեղներ-Սիրիո	Tecnofar	Tecnofar	հատ	15,000	27	405,000	Ոչ ուշ, քան 23.12.2019թ.
4	Ալգինատ	Ալգինատ-Հիդրոգում 5	Zhermack	Zhermack	հատ	30	2,904	87,120	Ոչ ուշ, քան 23.12.2019թ.
5	Ֆայլեր K-files, H-files	Ֆայլեր K-files, H-files-Հեդսթրոմ ֆայլ, K-ֆայլ	Sybron Endo	Sybron Endo	հատ	5,000	600	3,000,000	Ոչ ուշ, քան 23.12.2019թ.
11	Ժամանակավոր պլոմբանյութ	Ժամանակավոր պլոմբանյութ-Տեմպոտեք 40,0	Produits Dentaires	Produits Dentaires	հատ	15	6,600	99,000	Ոչ ուշ, քան 23.12.2019թ.
12	Բոնդ	Բոնդ-Օպտի բոնդ սոլո պլյուս 5մլ	Kerr	Kerr	հատ	20	26,900	538,000	Ոչ ուշ, քան 23.12.2019թ.
13	Պլոմբանյութ լուսակարծրացող	Պլոմբանյութ լուսակարծրացող-Հերկուլայթ գեներալ կիթ	Kerr	Kerr	լրակազմ	15	196,000	2,940,000	Ոչ ուշ, քան 23.12.2019թ.
14	Քիմիական կարծրացման ցեմենտ	Քիմիական կարծրացման ցեմենտ-Ֆուջի 1 տրիպակ	GS	GS	լրակազմ	5	43,000	215,000	Ոչ ուշ, քան 23.12.2019թ.
15	Հեղուկ պլոմբանյութ	Հեղուկ պլոմբանյութ-Բրիլիանտ ֆլոու	Coltene Whaledent	Coltene Whaledent	հատ	40	11,900	476,000	Ոչ ուշ, քան 23.12.2019թ.
17	Արմատալիցք	Արմատալիցք-Էնդոֆիլ ռուլ կանալ	Produits Dentaires	Produits Dentaires	լրակազմ	30	19,800	594,000	Ոչ ուշ, քան 23.12.2019թ.
19	Պլոմբը փայլեցնող մածուկ	Պլոմբը փայլեցնող մածուկ-Քլինինգ	Kerr	Kerr	հատ	1,000	150	150,000	Ոչ ուշ, քան 23.12.2019թ.
20	Թքածծիչ	Թքածծիչ	Super Dent	Super Dent	հատ	20,000	11.88	237,600	Ոչ ուշ, քան 23.12.2019թ.

21	Տուրբինային ծայրակալներ	Տուրբինային ծայրակալներ PAP-SU-M4	NSK	NSK	հատ	7	98,000	686,000	Ոչ ուշ, քան 23.12.2019թ.
22	Ուղիղ և թեք անկյունային ծայրակալների հավաքածու միկրոմոտորով	Ուղիղ և թեք անկյունային ծայրակալների հավաքածու միկրոմոտորով-EX-203C-M4-Set	NSK	NSK	լրակազմ	8	228,000	1,824,000	Ոչ ուշ, քան 23.12.2019թ.
23	Պլոմբանյութը չորացնող լամպ	Պլոմբանյութը չորացնող լամպ-Դեմի Ուլտրա	Kerr	Kerr	հատ	2	565,000	1,130,000	Ոչ ուշ, քան 23.12.2019թ.
86	Դենտալ իմպլանտներ աբաթմենթներով	Դենտալ իմպլանտներ աբաթմենթներով-Սեվոն Մեդիքս	IH2	Sewon Medix	հատ	500	47,580	23,790,000	Ոչ ուշ, քան 23.12.2019թ.

Ապրանքները պետք է մատակարարվեն ք. Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական դեղաբազա:

Ապրանքների մատակարարման ժամանակ Վաճառողը Գնորդին ներկայացնում է.

1. Եվրամիության երկրներից որևէ մեկում և/կամ ԱՄՆ-ում և/կամ Ճապոնիայում ապրանքների գրանցման հավաստագրի (բացառություն են կազմում ՀՀ-ում արտադրված ապրանքները) պատճենը,

2. Արտադրողի միջազգային հավաստագրի /ISO, GMP, EC կամ այլ/ և/կամ/ արտադրող պետության կողմից տրված արտադրության անվտանգության և որակի վերահսկման հավաստագրի պատճենը,

3. Տվյալ խմբաքանակի համար ապրանքն արտադրողի կամ վերջինիս պաշտոնական ներկայացուցչի կողմից տրված համապատասխանության և/կամ որակի սերտիֆիկատ:

Պիտանելիության ժամկետ ունեցող ապրանքների դեպքում՝ ապրանքները հանձնման պահին պետք է ունենան առնվազն պիտանելիության ժամկետի 1/3-ը:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Ապրանքի		
Հ/Հ	անվանումը	տեխնիկական բնութագիրը
1	Տուրբինային գչիրներ	Բորեր ալմաստե գլխիկով տուրբինային ծայրակալի համար: Ալմաստե հատիկները համասեռ են և հավասարաչափ, խոշորությունը՝ 20-150μ: Յուրաքանչյուր խմբաքանակ անցնում է կարծրության լազերային թեստավորում: Ծագման Հավաստագիր՝ խմբաքանակներով:
2	Պլոմբը հարթեցնելու ռետին	Անկյունային ծայրակալի համար պլոմբը հարթեցնելու ռետինե ծայրակալներ , առանց լատեքսի, ռետինե մասը ունենա թեքված գալարներ, որը հնարավորություն է տալիս ռետինե մասի հովացում, ինչպես նաև սեղմվելով ատամներին թույլ չի տալիս օգտագործվող մածուկի տարածումը բերանի խոռոչում: Գործարանային փաթեթավորմամբ:
3	Ատամնաբուժական ասեղներ	Ատամնաբուժական ասեղներ 30G-25mm, 30G-16mm, 27G-36mm, ախտահանված ռադիացիոն մեթոդով ISO 7885-2001, EN 556-1, ISO 11137, պատրաստված AISI 304 - 1.4301 պողպատից, կազմը՝ C ≤0,07, Si ≤1,00, Mn ≤2,00, N ≤0,11, Cr 17,5-19,5, Ni 8,0-10,5:Գործարանային փաթեթավորմամբ:
4	Ալգինատ	Ալգինատային չափանյութ արտադրության, 453gr, ստվարաթղթե վակումային փաթեթավորմամբ, 5 օր ստաբիլությամբ, մրգային համով, մանուշակագույն, բերանում գտնվելու ժամանակը 45վայրկյան :Շաղախման ժամանակը՝ 30 վայրկյան: Ընդհանուր ժամանակ 1 րոպե 50 վրկ.: ISO 1563/ADA 18
5	Ֆայլեր K-files, H-files	N10, N15, N20, N25, N30, N35 Արմատախողովակը մշակելու համար: Երկարությունը՝ 25մմ, 30մմ, ոչ ճկուն: Քանակները բաշխել հավասարաչափ ըստ համարների: N6 փաթեթավորմամբ տուփ

11	Ժամանակավոր պլոմբանյութ	դենտին մածուկ 40գր , ապակե տարայով
12	Բոնդ	opti bond solo plus 5 մլ շշով, էթանոլի հիմքով, 15 տոկոս ծավալով բաղկացած է ոչօրգանական բարիումական լցիչից 0.4 միկրոն մասնիկների չափով
13	Պլոմբանյութ լուսակարծրացող	XRV HERCULITE 78gr KERR կամ համարժեք :Հիբրիդային պլոմբանյութ - 78 գր. տարայով, պարունակում է 16 ներարկիչ դենտինային 5 գր A2, B1, C2, D2, էմալային 5գր A1, A2, A3, A3,5 , B1, B3, C2, C3, D2, D3 և կտրիչային 2,5 գր մեդիում, լայթ պլոմբա , օրթոֆոսֆորական թթու 3 գր, ապլիկատորներ 50 հատ, բոնդ 5 մլ.Պլոմբանյութը 76 տոկոսով (57 տոկոս) ծավալով բաղկացած է ոչօրգանական բարիումական լցիչից 0.6 միկրոն մասնիկների չափով
14	Քիմիական կարծրացման ցեմենտ	35g փոշի 25gr հեղուկ, ռենտգենկոնտրաստային ապակեիոնոմերային ֆիքսող ցեմենտ, գույնը բաց դեղին, արտազատում է ֆտոր, ֆիքսացիոն ուժը 4 մեգապասկալից բարձր, շաղախման ժամանակը՝ 20 վայրկյան, աշխատանքային ժամանակը՝ 2 րոպե.
15	Հեղուկ պլոմբանյութ	Նանոքոմպոզիտային պլոմբանյութը 84 տոկոս քաշով բաղկացած է ոչօրգանական բարիումական լցիչից 0.02 միկրոն մասնիկների չափով, առնվազն 2,3գ ծավալով
17	Արմատալիցք	Կոմպլեկտ՝ փոշի-endofill-15gr, բաղադրությունը՝դեքսամեթազոնի ացետատ, հիդրոկորտիզոնի ացետատ, պոլիօքսիմեթիլեն, թիմոլի յոդիդ հեղուկ-15ml, էվգենոլ
19	Պլոմբը փայլեցնող մածուկ	2գ. Փաթեթավորմամբ, միանգամյա օգտագործման մածուկներ, պլոմբանյութի մաքրման և փայլեցման համար
20	Թքածծիչ	Թքածծիչ, բազմագույն : Գործարանային փաթեթավորմամբ:
21	Տուրբինային ծայրակալներ	M4 ելանցքով, կերամիկական գնդառանցքակալ, 8 անցք, որից չորս կետային սպրեյ և չորս օդ մղող անցք, գլխիկի լվացման համակարգով,գլխիկի չափսերը 12.1*13.3մմ, 360000-430000պտույտ րոպեում,բորի բռնիչը սեղմակով:
22	Ուղիղ և թեք անկյունային ծայրակալների հավաքածու միկրոմոտորով	M4 ելանցքով, հավաքածուն պարունակում է ուղիղ և թեք ծայրակալներ և միկրոմոտոր, ուղիղ ծայրակալը պետք է նախատեսված լինի 2,35մմ HP բորերի համար և ունենա 40000 պտույտ/րոպե, թեք ծայրակալը՝ 2,35 մմ CA բորերի համար, մինչև 40000 պտույտ/րոպե, միկրոմոտորը 88գ քաշով, չափը 40,8մմ, 22000 պտույտ/րոպե
23	Պլոմբանյութը չորացնող լամպ	Առանց մարտկոցի պոլիմերիզացիոն լամպ կոնդենսատորով, ալիքը 450-470 նմ, լիցքավորումը 40 վայրկյանում, հզորությունը 1100-1300 մՎ/ցմ2 , 60 աստիճանով 8 մմ լուսային ծայրակալ, քաշը մինչև 500 գ , աշխատանքային ժամանակը 25անգամ 10վրկ ցիկլի դեպքում, երեք տարվա երաշխիք
86	Դենտալ իմպլանտներ աբաթմենթներով	Երկու փուլանի իմպլանտներ իրենց աբաթմենթներով: Իմպլանտի մարմինը կոնա-ցիլինդրիկ (մարմնի վերին մասը ցիլինդրիկ, ստորինը կոնաձև): Իմպլանտի չապսերը, աբաթմենթի տեսակն ու չափսերը՝ ըստ պատվիրատուի կողմից ներկայացվող հայտերի: Իմպլանտները պետք է պատրաստված լինեն առնվազն 4-րդ աստիճանի մաքրության Տիտանիումի համաձուլվածքից: Իմպլանտները պետք է լինեն ստերիլիզացված գամմա ճառագայթումով: Իմպլանտները պետք է լինեն անհատական գործարանային փաթեթավորումով: Մատակարարվող իմպլանտների առաջին խմբաքանակի հետ պետք է տրամադրվի նաև իմպլանտների տեղադրման համար անհրաժեշտ բոլոր գործիքները:

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Էսզեթ Ֆարմա» ՍՊԸ
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ	տնօրեն
Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ	Ե. ՍԱՐԳՍՅԱՆ

АП 0296526

Հավելված N 2
N ՀՄԱԱՊՁԲ-9/8-2 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ապրանքի					
Հ/Հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	CPV անվանումը	Անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ.-ին՝ ըստ ամիսների, այդ թվում՝	
				դեկտեմբեր, բայց ոչ ուշ, քան 25-ը	Ընդամենը
1	33141193/158	ատամնաբուժական սպառման պարագաներ	Տուրբինային գչիրներ	1,020,000	1,020,000
2	33141193/159	ատամնաբուժական սպառման պարագաներ	Պլոմբը հարթեցնելու ռետին	358,800	358,800
3	33141193/160	ատամնաբուժական սպառման պարագաներ	Ատամնաբուժական ասեղներ	405,000	405,000
4	33141193/161	ատամնաբուժական սպառման պարագաներ	Ալգինատ	87,120	87,120
5	33141193/162	ատամնաբուժական սպառման պարագաներ	Ֆայլեր K-files, H-files	3,000,000	3,000,000
11	33141193/165	ատամնաբուժական սպառման պարագաներ	Ժամանակավոր պլոմբանյութ	99,000	99,000
12	33141193/166	ատամնաբուժական սպառման պարագաներ	Բոնդ	538,000	538,000
13	33141222/52	ատամնաբուժական սպառման բազմակոմպոնենտ պարագաներ	Պլոմբանյութ լուսակարծրացող	2,940,000	2,940,000
14	33141222/53	ատամնաբուժական սպառման բազմակոմպոնենտ պարագաներ	Քիմիական կարծրացման ցեմենտ	215,000	215,000
15	33141193/167	ատամնաբուժական սպառման պարագաներ	Հեղուկ պլոմբանյութ	476,000	476,000

17	33141222/54	ատամնաբուժական սպառման բազմակոմպոնենտ պարագաներ	Արմատալիցք	594,000	594,000
19	33141193/170	ատամնաբուժական սպառման պարագաներ	Պլոմբը փայլեցնող մածուկ	150,000	150,000
20	33141193/171	ատամնաբուժական սպառման պարագաներ	Թքածծիչ	237,600	237,600
21	33131160/4	ատամնաբուժական հղկող գործիքներ	Տուրբինային ծայրակալներ	686,000	686,000
22	33141223/26	բժշկական այլ գործիքներ և պարագաներ բազմակոմպոնենտ	Ուղիղ և թեք անկյունային ծայրակալների հավաքածու միկրոմոտորով	1,824,000	1,824,000
23	33141193/172	ատամնաբուժական սպառման պարագաներ	Պլոմբանյութը չորացնող լամպ	1,130,000	1,130,000
86	33131390/3	Ատամնաբուժական իմպլանտներ	Դենտալ իմպլանտներ աբաթմենթներով	23,790,000	23,790,000

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Ս. ՂԱՖԲԱՐՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Եսզեթ Ֆարմա» ՍՊԸ
տնօրեն

Ե. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 3
N ՀՄԱԱՊՁԲ-9/8-2 պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
N ՀՄԱԱՊՁԲ-9/8-2 պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն